

ՎԵՐԱԿԱՌՈՒԾՈՒՄԻՆ ԳԻՆԸ 7-14 ՄԻԼԻԱՌ ՏՈՒՆԱՐ

Վարչապետ Նաուաֆ Սալամ յայտնեց, որ իր դռները միշտ բաց են Չըզպալլային դիմաց, պատրաստակամություն յայտնելով փոխադարձելու «Հաւատարմութիւն Դիմադրութեան» խմբակցութեան նախագահ Երեսփոխան Սոհամմատ Ռաատի բարեկամութիւնը: Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի հետ տեսակցութեան ընթացքին Սալամ կառավարութեան յանձնառութիւնը յայտնեց վերականգնելու վերջին պատերազմին պատճառով կործանուածը: Ըստ վարչապետին, վերականգնումի համար անհրաժեշտ է առնուազն 7 միլիառ տոլար, մինչ Միջազգային դրամատուը կը խօսի 14 միլիառի մասին: «Ուաշինկթընի մէջ գումարուած ժողովին փորձեցինք այդ դրամատուընէն ապահովել 250 միլիոն տոլար եւ յաջողեցանք, մինչ ֆրնասացիներն ալ յատկացուցին 75 միլիոն տոլար», ըսաւ Սալամ, կառչածութիւն յայտնելով կառավարութեան աշխատանքային ծրագրին՝ ներառեալ Լիբանանի ամբողջ տարածքին պետութեան հեղինակութեան ամրապնդումը, զէնքի հարցի լուծումը եւ Թայէֆի համաձայնութեան ամբողջական գործադրութիւնը: Վարչապետին կարծիքով, խորհրդարանի նախագահը որեւէ վերապահութիւն չունի բարեկարգումներու ծրագրին առնչութեամբ:

Ելեւնուտքի նախարար Եասին ժապէր հաւաստիացուց, որ բնականոն յարաբերութիւնը կը վերականգնուի վարչապետին հետ եւ կառավարութիւնը կ'ակնկալէ արտերկրէն ստանալ մէկ միլիառ տոլարի օգնութիւն:

ԻՐԱՔԻ ՀԵՏ ՇԱՏ ԾՐԱԳՐԵՐ

Հանրապետութեան նախագահ ժողէֆ Աուն յայտնեց, թէ Լիբանանի եւ Իրաքի միջեւ մշակուած են բազմաթիւ ծրագրեր,



որոնցմէ պիտի օգտուին երկու երկիրները: Իրաքի նախագահը իր կարգին պատրաստակամութիւն յայտնեց բոլոր ոլորտներուն մէջ համագործակցելու Լիբանանի հետ եւ համակար-

գելու տարածաշրջանային եւ միջազգային թղթածրարներուն վերաբերեալ երկու կողմերուն կեցուածքները: Իսկ Իրաքի վարչապետը Աունին հետ տեսակցութեան ընթացքին յայտնեց, թէ Պաղտատ կը զօրակցի Լիբանանի ներքաղաքական համաձայնութեան եւ խստիւ կը դատապարտէ Լիբանանի նպատմամբ իսրայէլեան ոտնձգութիւնները:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՅԱԲԷԼԵԱՆ ՀԱՐՈՒԱԾՆԵՐ

Հարաւային Լիբանանի եւ Պեքալի գանազան շրջաններու ուղղութեամբ իսրայէլեան դիպուկ հարուածները մաս կը կազմեն երկրի առօրեային: Առողջապահութեան նախարարութիւնը երէկ յայտարարեց, թէ մարդ մը զոհուած է սահմանային Պընթ ժպէլ գաւառին մէջ ինքնաշարժի մը ուղղութեամբ անօդաչու սարքերու արծակած հրթիռներէն: Իսրայէլեան բանակի բանբեր Ալիխայ Ատրահի իր կարգին յայտնեց, թէ ահաբեկած են Չըզպալլայի հրետանային ուժերու պատասխանատուներէն մէկը:

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԶԵՆՔԸ ԼՈՒՍԱՐՁԱԿԻ ՏԱԿ

Պաղեստինեան Ֆաթաի շարժումի լիբանանեան ճիւղի պատասխանատուներէն Ապու Իյատ Շաալան ժխտեց Լիբա-



նանի պաղեստինեան գաղթակայանները ապազինելու քննարկումներուն հարցով Ֆաթաիի մէջ տարակարծութիւններու առկայութիւնը: Անոր խօսքով, իրենք յանձնառու կը մնան նախագահ Մահմուտ Ապպասի Լիբանան կատարած այցելութեան ընթացքին գոյացած համաձայնութեան յօդուածներու գործադրութեան եւ ընդարձակ ժողով մը պիտի գումարեն 15 Յունիսին, նախքան գաղթակայաններուն ապազինումի հռովմային սկիզբը՝ 16 Յունիսին: Նշենք, որ նախագահ ժողէֆ Աուն յայտնած էր, թէ նախ պիտի յանձնուին Պէյրութի մերձակայ գաղթակայաններուն զէնքերը:

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՆԱԽԱԴԵՊ ԸԱՐՈՒԱԾ

Ուքրանիոյ դէմ Ռուսիոյ պատերազմը երէկ ականատես դարձաւ անակնկալ եւ աննախադէպ զարգացումներու, որոնք կրնան առաջնորդել յաւելեալ մագլցումի, կործանումի եւ զոհերու: Պատերազմի սկիզբէն ի վեր գուցէ մեծագոյն եւ ամենէն յաջող յարձակումով, ուքրանական հետախուզական ծառայութիւնները աւելի քան 110 թռչող սարքով ռուսական օդային խարխիսներ հարուածեցին Ուքրանիոյ հետ սահմանային գօտիին: Ուքրանական լարուած անօդաչուներուն ալիքը հասաւ մինչեւ Սիպերիոյ շրջանին մէջ գործող զինուորական ռազմակայանները, ուր կործանեցին օդակայաններուն մէջ կայանուած քանի մը տասնեակ կործանիչներ՝ ներառեալ Ռուսիոյ ռազմավարական հեռահար «Անթոնով» եւ «Թուփուլեւ» տիպի ռազմական օդանաւեր, որոնք իրկիզուեցան առանց օդ իսկ բարձրանալու: Ռուսիոյ Պաշտպանութեան նախարարութիւնը իր կարգին յայտարարեց ուքրանական սարքերով յարձակում մը ծախողութեան մատնելու մասին:

Ձինուորական մագլցումին զուգահեռ, Թուրքիոյ իշխանութիւններուն միջնորդութեամբ, երէկ Իսթանպուլի մէջ կազմակերպուեցաւ ռուս-ուքրանական բանակցային միստ, որ տեւեց աւելի քան ժամ մը, սակայն աւարտին որեւէ պաշտօնական յայտարարութիւն չիրապարակուեցաւ: Թուրքիոյ Արտաքին գործերու նախարարութիւնը յայտարարեց միայն, որ «միտսին ընթացքը վատ չէ եղած»:



գեց, թէ կարելի պիտի չըլլայ համաձայնիլ, եթէ Արեւմուտքին նպատակն է Իրանը գրկել հիւլէական խաղաղ ուժանիւթն օգտուելու հնարաւորութենէն:


ՕՏԱՐԱԶԳԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ ՍՈՒՐԻՈՅ ԲԱՆԱԿԻՆ ՄԵԶ

«Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը հաղորդեց, թէ Սուրիոյ զինուած ուժերը վերականգնելու հարցով իշխանութիւններուն մշակած ծրագիրը կը ներառէ օտարազգի զինեալներ

ՖՈՒԹՊՈԼԱՅԻՆ ԶՈՐ ՓԱՐԻԶԻ ՄԵԶ

Եւրոպայի ակումբային ֆութպոլի կարեւորագոյն՝ Champions League-ի աւարտական մրցումը առանց միջադէպերու չանցաւ Փարիզի մէջ, թէեւ փարիզեան ակումբ PSG-ին էր որ իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով տիտղոսին տիրացաւ Միւնիխի մէջ: Ֆրանսական ոստիկանութիւնը յայտարարեց, թէ Փարիզի մէջ տեղի ունեցած բազմաթիւ օրինախախտումներու պատճառով տեղի ունեցած է բախում ֆութպոլային խուլիկաններու եւ ոստիկանութեան միջեւ՝ պատճառելով բաղաքայինի մը մահը եւ երկու ծանր վիրաւոր՝ ոստիկանութեան շարքերէն:

ՎԱՍՏԱԿԱՆԵԱՏ ՊԱՐՈՒՍՈՅՑ ԱՍԱՏՈՒՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՄԵԶ



Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնը ուրախութեամբ կը տեղեկացնէ, թէ Հայաստանէն Պէյրութ ժամանած է հայկական պարարուեստի վաստակաշատ վարպետ պարոն Ասատուր Կարապետեան, որ պիտի միանայ Միութեան պարախումբին եւ իր հարուստ փորձառութեամբ նորովի պիտի ներշնչէ հա-

մայնքային մշակութային գործունէութեան: Ասատուր Կարապետեան Հայաստանի Պարի Պետական Անսամպլի երկարամեայ եւ նուիրեալ ղեկավարն է: 2007-2023 տարիներուն եղած է անսամպլի գլխաւոր պարուսոյցը. ժամանակաշրջան մը, երբ պարախումբը հասաւ նոր մակարդակի՝ ներգրաւուելով նաեւ ժողովրդական երաժշտութեան եւ Պարի ազգային կեդրոնի կազմին մէջ: Իր ղեկավարութեամբ անսամպլը ունեցաւ բազում բեմադրութիւններ, միջազգային շրջագայութիւններ եւ ազգային պարային ժառանգութեան արժեւորում:

Անոր մասնագիտական ճամբան սկսած է իբրեւ նուիրեալ պարող եւ հետզհետէ վերածուած է ուսուցանող վարպետի, որ կարելոր դեր ունեցած է հայ գեղարուեստական պարի սերունդներու կազմաւորման մէջ: Դեկավարած է նաեւ ու համագործակցած՝ Փարիզի «Նաւասարդ», Պէյրութի «Արեգ», Պուտաբշտի պարի անսամպլներու եւ այլ համոյթներու հետ՝ իր պարերուն միջոցով վերարտադրելով հայու ոգին, շարժումը եւ ինքնութիւնը:

Այսօր, հայրենիքէն դուրս, սակայն հայութեան սրտին մէջ, պարոն Կարապետեան կը գտնուի Պէյրութ եւ պատրաստ է իր գործօն մասնակցութիւնը բերելու Նոր Սերունդ Մշակութային Միութեան պարախումբի աշխատանքներուն: Անոր ներկայութիւնը վստահաբար նոր աւին պիտի ներշնչէ երիտասարդ պարողներուն, խթանէ խմբային աշխատունակութիւնը եւ հարստացնէ կատարողական որակը:


«Արեգ» պարախումբին վարչական կազմը, խմբակից անդամ-անդամուկիները, ինչպէս նաեւ Ն.Ս.Ս.Միութեան բազմաթիւ համակիրներ ջերմ ու մեծ հաւատքով կը դիմաւորեն այս փայլուն արուեստագէտը, համոզումով որ անոր առաջնորդութեամբ կեանքի պիտի կոչուին նոր բեմադրութիւններ եւ պիտի զարթնին մոռցուած պարեր:

Բարի գալուստ կը մաղթենք պարոն Ասատուր Կարապետեանին եւ արդիւնաւետ, ոգեւորիչ ստեղծագործական տարեշրջան մը՝ ի սպաս սփիւռքեան հայ մշակոյթի շարունակական զարթօնքին:

ՄՆԴ, ՀՄՆԴ ԵՒ ՄՆԴԱՍՏԱՄՆ

«Համդ» բառին հանդիպա՞ծ էք երբեւիցէ ձեր ընթերցումներուն ընթացքին:

Համաստեղ, Մմծուրի, Բակունց կամ Գալշոյեան իրենց գիւղագրութիւններուն մէջ առատօրէն կը գործածին այս բառը, որ կը մշանակէ **դաշտ, արտ, մշակելի հող, արօտավայր**:



«Գիւղացիները ամբողջ ընտանիքով կ'աշխատին հանդերուն մէջ», կը գրեն մեր գիւղագիրները իրենց նկարագրական էջերուն մէջ: Կամ, եկէ՛ք յիշենք արեւելահայ սիրուած մանկագիր Ղազարոս Աղայեանի մշանաւոր «Ճախարակ»՝ ոտանաւորը, որուն մէջ այդ նախնական ու խեղճուկ գործիքը բանաստեղծին համար դարձած էր աղքատութեան ու չքաւորութեան դէմ պայքարելու խորհրդանիշ մը: Հոն եւս գործածուած է «հանդ»-ը.

Մամիր, մամիր, իմ ճախարակ,
Մամիր սիպտակ փաթիւներ,
Մամիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցաւեր:

Տիգրանիկս գուկպայ չունի,
ՀԱՆԴ է գնում ոտաբաց,
Գաթիլէս չուխա չունի,
Միշտ անում է սուգ ու լաց:

(Հարունակութիւնը տեսնել էջ 2)

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍԱՐԿԱԻԱԳՈՒՏԻՆԵՐՈՒՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Հինգշաբթի, 29 Մայիսի յետմիջօրէին, Երեւանի Աւետիք Իսահակեանի տուն-թանգարանի սրահին մէջ, տեղի ունեցաւ գիրքի շնորհահանդէս, մտաւորականներու ընտրանիի մը ներկայութեամբ: Մենագրութեան հեղինակն է դոկտ. Աբէլ քինյ. Մանուկեան: Գիրքը նախապէս լոյս տեսած էր արեւմտահայերէնով, իսկ այս անգամ արեւելահայ տարբերակով, որուն վերածման աշխատանքը կատարած է Արեւիկ Արապեան: Հատորը միաժամանակ թարգմանուած է անգլերէնի: Գիրքը լոյս տեսած է 2023-ին:



Ձեռնարկին բացման խօսքը կատարեց եւ այնուհետեւ հանդիսավարութիւնը վարեց Արմինէ Մելքոնեան, որ համառօտակի անդրադարձաւ տոյն աշխատութեան կարեւորութեան եւ բովանդակութեան: Ան անդրադարձաւ հեղինակին կենսագրական գիծերուն, ուսումնառութեան Վիեննայի մէջ, հոգեւորականի պաշտօններուն, գիտական կոչումներուն, հեղինակած գիրքերուն, անոր հետաքրքրութեան ոլորտներուն եւ այլն: Ապա, մենագրութեան գիտական վերլուծութիւնը ներկայացուց Արուսեակ Թամրազեան, ընդգծելով աշխատութեան ծանրակշիռ բնոյթը, միւթին մշակման գիտականութիւնը, աղբիւրագիտական վաւերականութիւնը. ան կարգ մը հատուածներ ընթերցելով, շօշափելի կերպով հաստատեց թէ մենագրութեան հեղինակը կատարած է պրպտողական երկար ու բարեխիղճ աշխատանք, դասախոս Յարութիւն Յարութիւնեան, որ կրօնականներու եւ փիլիսոփաներու խօսքերէն մէջբերելով, կեդրոնացաւ իգական սեռին ունեցած դերին ու առաքելութեան քրիստոնէական մօտեցումով: Ան ընդգծեց, որ իին ժամանակներուն եւ յատկապէս յունական դիցաբանութեան մէջ չհաստատուածները մեծ մասամբ կիներն էին: Կանանց աստուածացունքը կու գայ դարերէն եւ Մարիամ ինքնաբերաբար շարունակութիւնն է անոնց: Ան իր ականածանքը յայտնելով գիրքի հեղինակին եւ արծարծած միւթին շուրջ, հետաքրքրական տեղեկութիւններ փոխանցեց կանանց կրօնականութեան, եկեղեցւոյ գործերուն մէջ կանանց օգտակար մասնակցութեան, եկեղեցւոյ պատմական դերերու կարծիքներուն շուրջ: Իր սրտի եւ երախտագիտութեան խօսքը

կարճառօտ փոխանցեց Մատենադարանի վաստակաշատ դասախօս, աստուածաբան, հեղինակ Էռնա Շիրինեան:

Այնուհետեւ եզրափակիչ խօսքը փոխանցեց Տէր Աբէլ քինյ. Մանուկեան, ճշելով որ այս զգայուն միւթը տասնեակ տարիներէ ի վեր եղած է իր հետաքրքրութեան եւ ուսումնասիրութեան միւթը: Պատմական փաստերու յիշատակումով հաստատեց, թէ սարկաւագուիներ, միանձնուիներ գործօն դեր ունեցած են հայ եկեղեցիէն ներս, ունեցած հոգեւոր եւ հանրային ծառայութիւններ, ճշելով օրինակ Սանդուխտ իշխանուիին պարագան: Ան դիտել տուաւ, որ Հայաստանի մէջ քրիստոնէութեան տարածման մէջ եթէ Գրիգոր Լուսաւորիչ եղած է գլխաւոր անհատականութիւնը, ապա նոյնքան մեծ առաքելութիւն ունեցան Հռիփսիմեանց եւ Գայանեանց կոյսերը, որոնց նահատակութեան հետեւանքով լայն ժողովրդականութիւն գտաւ եւ հաւատացեալներու մեծ բազմութիւն հետեւեցաւ նոր կրօնքին, վկայ անոնց նուիրուած նախ վկայարանները եւ ապա վանքերը: Ան ճշեց կարգ մը վայրեր, ուր քրիստոնէայ կանայք եւ իգական սեռի նուիրեալներ հանրօ-



գուտ մեծ ծառայութիւններով գրաւած են ուշադրութիւնը հայութեան՝ ինչպէս Կ. Պոլիս, Նոր Զուղա, Թիֆլիս: Ան կարգ մը աստուածաբան հայրերու կարծիքները մէջբերելով հաստատեց, թէ այս միւթը եղած է վիճաբարոյց եւ շատ հայրեր ընդդիմացած են կանանց ներկայութեան եկեղեցիէն ներս: Ի հարկէ, ան դիտել տուաւ Մարիամ Աստուածածնի պարագան, Մարիամներու ներկայութիւնը Քրիստոսի կեանքին մէջ, կանանց խիզախութիւնը Քրիստոսի գերեզման այցելելու, երբ փախած էին տղամարդ աշակերտները անոր: Ապա՝ անդրադառնալով այսօրուան կացութեան, ճշեց թէ վերջերս Թեհրանի թեմէն ներս ունեցած ենք սարկաւագուի: Որմէ ետք դիտել տուաւ, որ պէտք է մօտենալ ժամանակակից մտածողութեամբ, կանանց ներգրաւել եկեղեցիէն ներս, վստահիլ եւ քաջալերել զանոնք, ապա թէ ոչ կրնան հեռանալ հայ եկեղեցւոյ շրջածիրէն եւ դառնալ աղանդաւորներու հետեւորդներ, ինչ որ ազգային իմաստով անբաղձալի է: Ան որոշ մանրամասնութիւններ եւս փոխանցեց մենագրութեան եւ անոր այժմեականութեան շուրջ: Նշեց, թէ Տէր Աբէլ այս հայրենական այցելութեան, Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանին նուիրած է պատմական լուսանկար մը հայ սարկաւագուիի մը ներկայացմող, որուն համար Մատենադարանի աշխատակիցները շնորհակալութիւն յայտնեցին այս մշակութամուրէ բայլին համար:

Խօսքերէն ետք, հեղինակը նորատիպ հատորը մակագրեց ներկաներուն համար: Որմէ ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ԹԴԹԱԿԻՑ

ՏՈՒՐ. ՎԱՐՈՒԺ ԱԼԹԵՓԱՐՄԱՔԵԱՆ ՅԱԻԵԼԵԱԼ ԼՈՅՍ ԵՒ ՅՈՅՍ ԿԸ ՍՓՈՒԷ ՀԲԸՄ ԼԻՐԱՆԱՆԻ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Ամերիկահայ հանրածանօթ բժիշկ եւ հասարակական գործիչ, «Գլարա Մարկոսեան» հիմնադրամի տնօրէն, ՀԲԸՄ-ի Յովակիմեան-Մանուկեան վարժարանի շրջանաւարտ՝ տոքթ. Վարուժ Ալթփարմաքեան, Ուրբաթ, 23 Մայիս 2025-ին, այցելեց ՀԲԸՄ-ի Արամեան բժշկական կեդրոն, շրջեցաւ բոլոր բաժինները եւ իր գոհունակութիւնը յայտնեց այնտեղ մատուցուող մարդասիրական հոգատարութեան համար: Կեդրոնին տնօրէն տիար Համբիկ Մարտիրոսեան հանդէս եկաւ սպառիչ բացատրութեամբ եւ շնորհակալական խօսքով, նաեւ յուշանուէր յանձնեց տոքթ. Ալթփարմաքեանին:



Շաբաթ, 24 Մայիս 2025-ին, տոքթ. Ալթփարմաքեան ՀԲԸՄ-ի Տեմիրճեան կեդրոնին մէջ այցելեց հայոց լեզուի շաբաթօրեայ դպրոցը, ՀԵԸ-ի կեդրոնական գրասենեակը, մարզադահլը, թէքուանտոյի ու պապեթպոլի մարզումներու եւ գեղանկարչութեան դասերու սրահներն ու դասարանները, ապա ՀԲԸՄ-ՀԵԸ Անդրանիկ Անթիլիասի սկստուական սենեակները, որոնք բարեկարգուած են «Գլարա Մարկոսեան» հիմնադրամին աջակցութեամբ: Մատուցուեցաւ ճաշ, ներկայութեամբ ՀԲԸՄ Լիբանանի Շրջանակային յանձնաժողովին անդամ տիար Արթուր Գունտաքեանին, ՀԵԸ Անդրանիկ Անթիլիաս Գործադիր մարմինէն անդամներու՝ գլխաւորութեամբ ատենապետուի տիկ. Թալին ճէպէճեան-Ինգմատոսեանին ու սկստական խմբապետութեան: Նախքան ակումբէն մեկնիլը, տոքթ. Ալթփարմաքեան եւ հիւրերը զրուցեցին իրենց շաբաթական հաւաքին համար ժամանած սկստուներուն հետ, մինչ ընդհանուր խմբապետ Յովիկ Փուլաճեան իւր բժիշկը պատուեց սկստական փողկապով մը՝ որպէս խորհրդանիշ ծառայասիրութեան, նուիրումի եւ վեհանձնութեան:



Տոքթ. Ալթփարմաքեանին ու ընկերակիցներուն յաջորդ կանգաւոր ՀԲԸՄ-ի Համայնքային կեդրոնն էր (Նազարեան-Մովսէսեան համալիր), ուր անոնց ողջունեցին ՀԲԸՄ-ՀԵԸ Անդրանիկ-Սեւանի Գործադիր մարմինի անդամները, գլխաւորութեամբ ատենապետ տիար Նշան Դորդորեանի եւ Ծնողաց, Սկստական, Ընկերային եւ Շրջանաւարտից վարչութիւններու անդամներուն: Տոքթ. Ալթփարմաքեան ապա առաջնորդուեցաւ դէպի վարչական եւ սկստական սենեակները, որոնք անցնող տարուան ընթացքին վերանորոգած եւ յարդարած է «Գլարա Մարկոսեան» հիմնադրամը: Գործադիր մարմինի փոխատենապետ եւ Ծնողաց վարչութեան ատենապետուի տիկ. Օսան Առաքելեան արտասանեց ողջոյնի խօսք մը ու շեշտեց. «Դուք լուսաւոյն օրինակ էք, որ իրապէս կարելի է ըլլալ թէ՛ յաջողակ մասնագէտ, թէ՛ ծառայատէր հայորդի»: Տոքթ. Ալթփարմաքեան այցելութիւնը եզրափակեց խոստանալով միշտ հնարաւորինս օգտակար հանդիսանալ սկստական շարժումներուն:



Երկուշաբթի, 26 Մայիս 2025-ի առաւօտեան Լիբանանի եւ ՀԲԸՄ-ի փոքրիկ դրօշներ բռնած ՀԲԸՄ-ի վարժարաններու աշակերտները հաւաքուեցան դպրոցին գլխաւոր դարպասին մօտ՝ հիւրընկալելու հեռաւոր ափերէն ժամանած, իրենց համար տակաւին անծանօթ ազգային գործիչը, որուն շնորհիւ իրենք Լիբանանի «մութ» տարիներուն բախտաւորուեցան լուսաւոր վարժարանով մը: Հանդիսասրահին մէջ, աշակերտ-

Հարունակութիւնը տեսնել էջ 3

ՄՆԴ, ՀՄՆԴ ԵՒ ՄՆԴԱՍՏԱՆ

(Հարունակուած էջ 1-էն)

Եթէ քիչ մը աւելի հետազօտենք մեր քաղցրիկ լեզուն, պիտի իմանանք որ «հանդ»-ին նախնական բուն արմատն ալ «անդ»-ն է: Այդ, ԱՆԴ, որ նմանապէս կը նշանակէ արտ, դաշտ, մշակելի հող: «Անդապախ» (դաշտի պահակ) բառը հոսկէ կու գայ: Հոսկէ է նաեւ մեր պապերուն կողմէ շինուած շատ գեղեցիկ բառ մը՝ ԱՆԴԱՍՏԱՆ-ը, որ կը նշանակէ ընդարձակ դաշտ, դաշտագետին:

Այս բառը, ինքնին, սիրուն է ու բարեհունչ: Ճիշդ այդ պատճառով ալ անիկա մեր մշակութային կամ տոհմիկ ապրումներուն մէջ պահած է ու կը պահէ իւրայատուկ քաշողականութիւն մը:

Ամերիկահայ գրող Յակոբ Ասատուրեանի բանաստեղծութիւններու երախայրիքը կը կոչուէր «Անդաստան» (1946, Պոսքըն): Այս միեւնոյն անունով՝ գրականութեան ու արուեստի նուիրուած որակաւոր պարբերական մը հրատարակուած էր Փարիզ, 1952-1969, բանաստեղծ ու տպարանատէր Բիւզանդ Թօփալեանի անձնական ճիգերով ու խմբագրութեամբ: Անդին, Հալէպի մէջ ալ, դարձեալ նոյն անունով, հայերէնի 6 հատորանոց դասագիրք մը պատրաստուած էր Յակոբ Չոլաքեանի կողմէ ու հրատարակուած, ժամանակ մը առաջ (2009-2014):

Անդաստանը իր փառաւոր տեղն ունի նաեւ մեր կրօնական գրականութեան ու ծեսերուն մէջ: Արդարեւ, Անդաստանը դաշտի, հողի ու սերմնցուի հանդիսաւոր օրհնութիւնն է, որ հայկական մեր եկեղեցիները կը կատարեն տարին քանի մը անգամ, մասնաւորաբար՝ Խաչվերացի տօնին: Մեր նահատակ բանաստեղծը՝ Դանիէլ Վարուժան, հաւանաբար մերշնչուելով Անդաստանի եկեղեցական իմաստալից ծիսակատարութեան, նոյն վերնագրով գրի առած է գոհարանման բանաստեղծութիւն մը, ուր ինք եւս կ'օրհնէ աշխարհի չորս ծագերը՝ խաղաղութեան ու բերրիութեան սքանչելի մաղթանքներով:

Արեւելեան կողմն աշխարհի
խաղաղութիւն թող ըլլայ...
Ո՛չ արիւններ, քրտիքն հոսին
Լայն երակին մէջ ակօսին:
Ու երբ հնչէ կոչնակն ամեն գիւղակի՝
Օրհներգութիւն թող ըլլայ:

Հարաւային կողմն աշխարհի
Պտղաբերուն թող ըլլայ...
Ծաղկի՛ մերը փեթակներուն,
Յորդի գիւնն բաժակներուն.
Ու երբ թխեն հարսերը հացը բարի՝
Սիրերգութիւն թող ըլլայ:

«Անդ»-ը երկրորդ իմաստ մըն ալ ունի: Անիկա կը նշանակէ «այնտեղ, հոն»: Եւ այս բառը զուգահեռ կ'ընթանայ «աստ»-ին հետ, որ իր կարգին՝ կը նշանակէ «այստեղ, հոս»: Աստ ու անդ:

Բանասէրներ կամ գրականագէտներ իրենց աշխատասիրութիւններուն մէջ երբ քաղուածք մը կատարեն տպագրեալ որոշ աղբիւր մը պարտին մշել զայն անունով ու լեզուով: Սակայն աւելի ետք, քիչ անդին, երբ հարկադրուին կրկին (երկիցս, երիցս կամ աւելի անգամներ) մատնանշել նոյն աղբիւրը, այս անգամ կը բաւարարուին «տեսն անդ» գրելով, այսինքն՝ մեզ կը յղեն դէպի այնտեղ, դէպի այն աղբիւրը, որ անգամ մը մշած էին նախապէս:

Ունինք «աստանդական» բարդածանց (աստ + անդ + ական) բառը, որ կը նշանակէ «հոս ու հոն թափառող»: Նախաեղեռնեան մեր գրագէտներէն շատեր այդպէս էին աստանդական: Անոնք ականայ կը հեռանային իրենց ծննդավայրէն ու հարազատ միջավայրէն, սա քաղաքին կամ մա երկրին մէջ ժամանակաւոր աշխատանքի մը կը ձեռնարկէին՝ մերք իրելու ուսուցիչ, իրելու տնօրէն վարժարանի մը կամ իրելու խմբագիր լրագրի մը...: Զարդարեան, Արփիարեան, Օտեան այդպէս չէի՞ն...: Այս վերջինը իր աստանդական կեանքը հիանալիօրէն նկարագրած է «Տասներկու տարի Պոլսէն դուրս» խորագիրը կրող յուշագրութեան մը մէջ:

«Աստ»-ն ու «անդ»-ը, ինքնաբերաբար, մեզի կը թելադրեն ուրիշ ազգական բառեր ալ: Զորօրինակ, ԱՅՈՐ եւ ԱՆՐՐ կցորդ բառերը: Առաջինը կը նշանակէ «դէպի այս կողմ», երկրորդը՝ «դէպի այդ կողմ»: Պատմագրական գիրքի մը մէջ կը կարդանք.

- Անդրկովկասի երեք երկիրները՝ Հայաստան, Վրաստան ու Ատրպէյճան, իրերայաջորդ կերպով իրենց անկախութիւնը հռչակեցին 1918 Մայիսին:

Նոյն ծելով կազմուած են Այսրյորդանան, Անդրատլանտեան, անդրմանիշակագոյն (ճառագայթներ), անդրսահմանային, անդրշիրիմեան (գերեզմանէն անդին) բառերը:

Լ. Հ.

«ՆԵՂՈՍԷՆ ՄԻՆՁԵՒ ՕՆԹԱՐԻՕ ԼԻՃ»՝ ԻՐԱՅԱՏՈՒԿ ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ

ՀԱՔԷ ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ

Հրատ Բոլատեանի «Նեղոսէն մինչեւ Օնթարիօ լիճ» անգլիատառ գիրքը հետաքրքրական եւ իւրայատուկ յուշագրութիւն մըն է՝ տասնամակներու հանրային ծառայութեան եւ ազգային ինքնութեան պահպանման նուիրուած աշխատանքներու մասին, որ բարգմանեցի հայերէնի եւ զայն ներկայացուցի հայ ընթերցողին «Տարբերակ21» հարթակին միջոցով։

«Նեղոսէն մինչեւ Օնթարիօ լիճ» խորապէս անձնական եւ մտորումներով լեցուն ինքնակենսագրութիւն մըն է, ուր Հրատ Բոլատեան կը պատմէ իր կեանքին մասին՝ որպէս Եգիպտոս ծնած հայ մը, որ 1966-ին կը գաղթէ Պանատա։ Գիրքին առաջին բաժնով, Բոլատեան կը ներկայացնէ իր յուշերը գրի առնելու դրդապատճառները, որոնք չեն բխիր փառասիրութենէ, այլ՝ ցանկութենէ մը վաւերագրելու իր լուռ եւ իմաստալից ծառայութիւնը՝ նուիրուած Հայ դատին ու սփիւռքահայութեան։



Յուշագրութիւնը կը յատկանշուի համեստութեամբ եւ ինքնութեան ամուր գագոցողութեամբ։ Բոլատեանի խորհրդածութիւնները յաճախ կը շեշտեն, որ իր ներդրումը, թեւ իր աչքով համեստ, մաս կը կազմէ աւելի ընդարձակ մշակութային եւ պատմական հոլովոյթի մը, որ կ'առաջնորդուի համայնքին հանդէպ պատասխանատուութեան գզգցումով։

Անոր պատասխանատուութեան գզգցումը ուժեղ արտայայտութիւնն է իր նուիրումին եւ յարգանքին՝ իր սփիւռքահայու առօրեայ կեանքին հանդէպ։

«Ես հպարտ եմ կատարածներովս եւ միաժամանակ խոնարհ եմ, որովհետեւ այն ինչ որ ես կատարեցի անպատի մը եւ կամ երկիր մոլորակի ծովեզրերու մէկ աւազահատիկը հազիւ ներկայացնէ»։

Ոճային տեսանկիւնէ, գրութիւնը պարզ է՝ հեռու պաճուճանքէ եւ առաջնորդութիւն կու տայ անկեղծութեան։ Անկեղծութեան խոր գզգցումը յստակ կերպով կ'արտայայտուի ընտանիքի անդամներուն կապուած յուշերուն մէջ՝ մանաւանդ հօր վերջին պատմութիւններուն եւ մեծ մօր քննալու առաջ ըսած խօսքերուն մէջ, որոնք ներկայացուած են նրբօրէն եւ յարգալից մօտեցումով։

«Ես կը յիշեմ մեծ մայրիկս, երբ մեզի կը դնէր մեր անկողիններուն մէջ, մեզի կը պատմէր Ուրֆայի յայտնի «Ախթար Պոտարիկի» առասպելական հեքիաթը։ Կը յիշեմ նաեւ, որ ինձմէ կը խնդրէր իր կռնակի ոսկորներուն վրայ քալել...»։

Բոլատեանի անկեղծ ոճը եւ երանգը ընթերցողը կը իրաւիթ իր անձնական աշխարհը՝ միաժամանակ նրբօրէն նկարագրելով բազմազան վայրերէ տեղահանուած հայերու հաւաքական փորձառութիւնը։

«Գուցէ նամակներս քիչ մը անսովոր կը համարէք, բայց այդ ես եմ. իմ տեսակետներն ու իմ կարծիքը»։

Ինքնակենսագրականը կը ծառայէ նաեւ որպէս հասարակական-պատմական վաւերաթուղթ մը 20-րդ դարու իրարարածութիւններու Հայոց ցեղասպանութեան, ցեղասպանութիւնն յետոյ գաղթերու, 1988-ի երկրաշարժին, Ղարաբաղեան շարժումին եւ Հայաստանի 1991-ի անկախութեան։ Այս առումով, հեղինակին կեանքը կը դառնայ ուսանելի մը, որով կ'ուրուագծուի Սփիւռքի հիմնական թեմաները՝ տառապանք, գոյատեւում, յիշողութիւն, ծառայութիւն եւ ինքնութեան պահպանում։

«Մայրս՝ Զարուհի Սայեանը, ծնած է 21 ապրիլ 1911-ին, Թուրքիոյ Ատանա քաղաքը։ Մենք չենք գիտեր իր Եգիպտոս գալու ստոյգ բուականը, վստահօրէն 1915-էն առաջ, եւ ան փրկուած է ցեղասպանութեան արհաւիրքէն»։

«Սօրս քեռին՝ Կիրակոս Ուրֆալեանը կ'ամուսնանայ Արքուհի Նաբաշեանի հետ։ Հոս պէտք է նշեմ, որ Կեսարիայէն փախած, ցեղասպանութեան սարսափներէն փրկուած, Նաբաշեաններու ընտանիքը թաքնուած է Ռաքքայի նշանաւոր մուհաֆէզին տունը»։

«Մենք Եգիպտոս ձգեցինք 16 հոկտեմբերին, մէկ շաբաթ մնացինք Աթէնք, մօրս զարմուտի Կիթթորիա Սայեանի տունը։ Մայրս իր զարմուտին չէր տեսած այն օրէն, երբ անոնք փախած էին Թուրքիայէն՝ ջեղասպանութեան վայրագութիւններէն առաջ»։

Յուշագրութիւնը ունի արխիւային բնոյթ, որ կը ներառէ նամակներ, լուսանկարներ, յօդուածներ եւ թերթերու , ինչպէս նաեւ 1960-ական բուականներու Թորոնթոյի հայկական համայնքի լուսանկարային պատմութիւնը, որ զայն կը վերածէ վաւերագրական կարեւոր վկայութեան մը։

Իր մանկութեան, պատանեկութեան եւ երիտասարդութեան տարիներուն մասին մանրամասն յիշատակները 20-րդ դարու կէսերու Գահիրէի մէջ, կը բացայայտեն ինքնութեան, համայնքային կապերու եւ տոկոսութեան նրբազգաց առնչութիւնները՝ մանաւանդ սփիւռքահայ իրականութեան շրջագիծին մէջ։

«Բացման արարողութեան օրը ես ներկայ էի։ Առաջին յարկին վրայ կը գտնուէին գլխաւոր գրասենեակները եւ «Յուսաբեր» թերթի խմբագրատունը»։ «...Հսկայական Փալատեան գրադարանը, որ ունէր հազարաւոր գիրքեր»։

«1965-ին դարձաւ Հայաստանի յիշատակներու անդամ, կնքահայրս բժիշկ Բարգէն Փափազեանն էր, որ այդ ժամանակ ՀՀԴ Բիւրոյի անդամ էր եւ պատահաբար կը գտնուէր Եգիպտոս»։

«Նեղոսէն մինչեւ Օնթարիօ լիճ» գիրքը աւելին է, քան անհատական յուշագրութիւն մը։ Ան անկեղծ վկայութիւն մըն է Սփիւռքի տոկոսութեան, ինչպէս նաեւ ցիրուք ու տեղա-հանումը, բայց ինքնութիւնը պահպանած ժողովուրդի մը պատմական ուղիին։ Այս տեսանկիւնէ, գիրքը արժանի է թէ՛ ակադեմական ուշադրութեան եւ թէ՛ համայնքային գնահատանքի։

«1966-ի սկիզբը, երբ մենք գիշերեցինք Ամսթերտամ»

Պանատա մեկնելու ճամբուն վրայ, ես առաջին անգամ ըլլալով հանդիպեցայ թուրքերու, հիւրանոցի նախասրահին մէջ։ Այս հանդիպումին մանրամասնութիւնները, զորս կը գտնէք այս գիրքին մէջ, լոյս տեսած են Թորոնթոյի Հայ երիտասարդական դաշնակցութեան Սիմոն Զաւարեան մասնաճիւղի «Արծա-գանգ» թերթի 1974-ի ապրիլեան թիւին մէջ»։

«...շէնք ունենալու եւ զայն մեր «Տուն» եւ հայ համայնքի կեդրոն կոչելու գաղափարը կեանքի երազանքն էր մեծ տես-լական ունեցող՝ «The Georgetown boys» -ի հայ որբերէն Գուրգէն (Քըրք) Սակարեանի, որուն Պանատա բերած էին 1923-ին»։

«Այլ նշանաւոր հայերու կողքին, ընկ. Գուրգէնը կարելոր դեր խաղցաւ «Avenue Road եւ Dupont Street» փողոցներուն անկիւնը գտնուող «ACC» շէնքը գնելու գործին մէջ»։

«Այդ շէնքին մէջ էր, որ ես մասնակցեցայ Հայ երիտասարդաց Դաշնակցութեան առաջին ժողովին...։ Այդ շէնքը դարձաւ հայ համայնքի կեդրոնը 1967-ի աշման»։ «Ես չեմ կրնար մոռնալ այդ գիշերը. բոլորին աչքերուն ուրախութեան արցունքները, յատկապէս մեր սիրելի ընկեր Գուրգէնը»։

«Տիւփոն փողոցին վրայ գտնուող Հայ կեդրոնը կը ներառէր 1969-էն ի վեր եղած է ՀՀԴ-ի, ՀՕՄ-ի, ՀԵԴ-ի եւ Համազգայինի տեղական մասնաճիւղերու, ինչպէս նաեւ՝ Թորոնթոյի ՀՍԸՄ-ի սկաուտներուն եւ մարզական կազմակերպութեան գրասենեակները»։

Յուշագրութեան մէջ Տէտէ Նալճեանի ներկայութիւնը կը խորհրդանշէ ընտանեկան սէրը եւ մշակութային յարատեւութիւնը։ Այն փաստը որ Նալճեան ունէր զօրավար Անդրանիկի շնորհակալական նամակը, կ'ընդգծէ անձնական եւ պատմա-կան խորքը միաժամանակ կապ ստեղծելով մէկ ընտանիքի պատմութեան եւ ցիրուքան ժողովուրդի մը հաւաքական ժառանգութեան միջեւ։

«Տէտէ Նալճեանի քով կար զօր. Անդրանիկի ստորագրու-թեամբ նամակ մը, ուր ան իր շնորհակալութիւնն ու երախտա-գիտութիւնը կը յայտնէր 1920-ականներու սկիզբը Գահիրէի մէջ իրեն մատուցուած բժշկական ծառայութիւններուն համար»։

Բոլատեանի Պանատա տեղափոխութիւնը եւ իոն սկսած նոր կեանքի պատմութիւնը շարունակութիւնն է այն այն բոլորին, որ ինք կը կատարէր Եգիպտոսի մէջ։

«Նոր աշխարհ ժամանած էի՝ նոր կենսակերպով, նոր տվո-րութիւններով, բայց անցումը այդքան ալ դժուար չէր. կը թուէր կարծես շարունակութիւնը ըլլալ այն բոլորին, զոր ես անց-եալին կը կատարէի»։

Այս արտայայտութիւնը նրբօրէն կը ցոյացնէ մշակութային կայունութեան թեման. մինչ աշխարհագրութիւնները կը փոխուին, ինքնութիւնը եւ նպատակը կը մնան անփոփոխ։

Բոլատեան կը պատմէ իր գործուն մասնակցութեան մասին ՀՀԴ-ի, ՀՕՄ-ի, ՀԵԴ-ի եւ Համազգայինի տեղական մասնա-ճիւղերու, ինչպէս նաեւ՝ Թորոնթոյի ՀՍԸՄ-ի սկաուտներուն եւ մարզական կազմակերպութիւններուն մէջ՝ ընդգծելով իր ներ-դրումը ՀՍԸՄ Թորոնթոյի սկաուտական բաժանմունքի հիմ-նադրութեան, շրջանային ժողովներու, ներկայացումներու եւ երիտասարդական ծեռնարկներու։ Այս մասնակցութիւնը նկա-րագրուած է ոչ թէ պարծենկոտութեամբ, այլ գոհունակութեամբ եւ ծառայութեան հանդէպ նուիրումութեան լուռ գզգցումով։ Անոր համեստ, բայց անդրդուելի նուիրումը կ'ամրապնդէ յուշագրութեան կեդրոնական պատգամը, թէ ինքնութիւնը կարելի է պահպանել չէ թէ անընդհատ յիշատակումով անց-եալին, այլ գործուն մասնակցութեամբ ներկայի մէջ։

Բոլատեանի յուշալպումներն ու լուսանկարչական օրագրու-թիւնները կը յիշեցնեն ընթերցողին, որ մշակոյթի ինքնահա-տատ գոյատեւումը նաեւ կախում ունի պատմութիւններու, դէպքերու եւ անձերու արխիւային պահպանումէն առաքելու-թիւն մը, որ Բոլատեանի յուշակցութիւնը ինքնին կ'իյրագործէ։ «Մասնակցած եմ ներկայացումներու եւ այլ միջոցառում-ներու։ Հպարտութեամբ եւ ամենայն համեստութեամբ եղած եմ Թորոնթոյի ՀՍԸՄ-ի խումբերու հիմնադիր եւ սկաուտական բաժնի անդամներէն մէկը։ Եղած եմ նաեւ 1970-ին Թորոնթոյի մէջ կայացած ՀՍԸՄ-ի 37-րդ ընդհանուր ժողովը կազմակեր-պողներէն մէկը։ Դուք կը գտնէք քանի մը լուսանկար այս ձեռնարկներէն, ինչպէս նաեւ երկու յուշալպում, որոնք լուսա-նկարչական յիշատակելի պատմութիւն մը կը ներկայացնեն Թորոնթոյի համայնքի 1960-ականներուն եւ հետագայ տարիներուն կազմակերպած քանի մը ձեռնարկներուն մասին»։

Բոլատեանի յուշագրութիւնը նաեւ կ'ընդգծէ իր նուիրումը Հայ դատին, որ կը ներառէ զանազան լրատւամիջոցներու եւ քաղաքական գործիչներու հետ համագործակցութիւնը, մասնաւորապէս՝ Հայոց ցեղասպանութեան պատմական ճշմարտութեան եւ Արցախի հակամարտութեան շուրջ։ Խմբագիրներուն նամակներ գրելով, քաղաքական գործիչ-ներու հետ կապեր հաստատելով եւ տեղական մամուլին հետ յարաբերութիւններ զարգացնելով։

«16 Յունուար 1987-ին, գրեցի Սոնրէալի «Gazette» թերթի խմբագրին՝ ամէն օր Պանատա ժամանող թուրք, այսպէս կոչուած «գաղթականներու» հոսքին մասին, որոնք 13 թիւիչ-ներով ամէն օր կը ժամանէին Պանատա։ Վստահ էի, որ այս նամակը մոյմպէս պիտի մերժուէր, ինչպէս նախորդ քանի մը նամակներուն մեծ մասը։ Բայց, ի գարմանս, ան հրապա-րակուեցաւ 29 Յունուար 1987-ին։ Այս նամակը եւ այլ նամա-կագրութիւններ կան այս գիրքին մէջ»։

Բոլատեանի ներգրաւուածութիւնը զանազան քաղաքա-կան կեանքին մէջ եւս նշանակալի է։ Տեղական մակարդակով կազմակերպչական աշխատանքներու մասնակցութեան անդին, ան դարձած է ազգային շահերու բանբեր մը, որ անուղղակիօրէն կրնայ ազդել քաղաքականութեան վրայ։ Այս ընթացքը վկայութիւն մըն է իր հետեւողական ներգրաւուա-ծութեան։

«Ընտանեկան պարտաւորութիւններուս պատճառով ես չկրցայ միանալ Հայ դատին, եւ ինքզինքս գտայ Հայաստանի եւ զանազան մամուլի, ինչպէս նաեւ զանազան քաղա-քական անձնաւորութիւններու ուղղութեամբ քարոզական արշալի ծրարակելու աշխատանքներուն մէջ՝ դատապար-տելով եւ թողադրելով լրատւամիջոցներուն եւ թրքական լրագիր կողմէ Հայոց ցեղասպանութեան պատմական իրո-ղութիւններու հեղուկներն ու խելաթիւրումները»։

Հարունակութիւնը տեսնել էջ 4

ՏՈՒՔԹ. ՎԱՐՈՒԺ ԱԼԹՐՓԱՐՄԱՔԵԱՆ...

Հարունակուած էջ 2-էն

ճերուն կողքին ճերկայ էին տնօրէնը եւ ուսուցչական կազմը, Ծնողաց վարչութենէն անդամներ, ինչպէս նաեւ պաշտօնական հիւրեր՝ Դամասկոսի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Արմաշ եպս. Նալպանտեանը, ՀԲԸՄ Լիբանանի Շրջանակային յանձ-նաժողովի ատենադպրուհի տիկ. Սիլվա Լիպարիտեանը,



Յանձնաժողովի վարչականներ՝ ՀԲԸՄ Լիբանանի Կրթական յանձնախումբի ատենապետուհի տիկ. Արտա Եանիքեանն եւ տիար Արթո Գունտաքճեանը, Կրթական յանձնախումբի ատե-նադպիր տիար Մայք Կիրիթեանն ու վարչականուհի տիկ. Հուրի Շըխըրտըմեանը եւ այլ հիւրեր։ Նախակրթարանի բաժնի պատասխանատու Տիկ. Յուլիէ Էմայեանի բարի գալուստի խօսքէն ետք ներկայացուեցաւ զեղարուեստական սեղմ յայտագիր մը, ապա ՀԲԸՄ-ի վարժարաններու տնօրէն տիար Արա Վասիլեան տեղեկացուց, որ տոքթ. Վարուժ Ալթըփար-մաքեանի տնօրինած «Վլարա Մարկոսեան» հիմնադրամին



միջոցներով ՀԲԸՄ-ի վարժարանները օժտուած են արեւային վահանակներով բաճող ելեկտրածին սարքերով, հետեւաբար լուծուած է ուժանիւթի խնդիրը եւ աշակերտները կը սորվին լուսաւոր վարժարանի մէջ։ Տնօրէնը աւետեց, որ նաեւ այդ ներդրումին շնորհիւ, ՀԲԸՄ-ի վարժարանները Մայիսի սկիզբը յաջողած են տիրանալ ամերիկեան հեղինակաւոր MSA ընկե-րակցութեան առանց նախապայմանի ամբողջական հաւա-տարմագրման։ Ան տոքթ. Ալթըփարմաքեանը անուանեց «Վարուժան Լուսաւորիչ» եւ ՀԲԸՄ-ի վարժարաններու մեծ ընտանիքին անունով երախտագիտութիւն յայտնեց անոր ու իննամադրամին, ինչպէս նաեւ նախաձեռնութեան աջակցողներ՝ վարժարանի բարեկամ եւ ՀԲԸՄ Յովակիմեան-Մանուկեանի շրջանաւարտ տոքթ. Վալէ Վասիլեանին ու ՀԵԸ-ի Կեդրոնական վարչութեան անդամ տիար Յակոբ Տանձիկեանին։ Տոքթ. Ալթըփարմաքեան աշակերտներուն խրատեց շատ մեծ երազել եւ աշխատիլ իրականացնել առաւելագոյնը, իսկ ապագային չմոռնալ իրենց դպրոցը եւ անոր զօրակցիլ։ Իր աջակցութեան



համար, ՀԲԸՄ Լիբանանի Շրջանակային յանձնաժողովի ատենապետ տիար Ժէրար Թիւֆէնքճեանին անունով ՀԵԸ-ի Կեդրոնական վարչութեան անդամ տիար Յակոբ Տանձիկեան տոքթ. Ալթըփարմաքեանը մեծարեց ՀԲԸՄ Լիբանանի գերա-գոյն ոսկեգօծ Մայրիկի յուշանուէրով։ Առաջնորդ Արթազանը «Պահպանիչ»ով փակեց հանդիսութիւնը, ապա ներկաները բարձրացան շէնքին տանիքը, ուր տոքթ. Ալթըփարմաքեան հատեց արեւային վահանակներով բաճող սարքերուն պաշտօ-նական բացման ժապաւնը։

Շրջագայութեան ընթացքին տոքթ. Ալթըփարմաքեանին յաճախ ընկերակցեցան Շիրակի թեմի առաջնորդ գերշ. Տ. Սիբայէլ արք. Աջապահեանը, Դամասկոսի Հայոց թեմի առաջ-նորդ գերշ. Տ. Արմաշ եպս. Նալպանտեանը, ազգայիններ տիար Գրիգոր Արսլանեանն ու տէր եւ տիկ. Հրայր ու Անահիտ Տանձիկեանները, Կիւմրիի «Խաչմերուկ» կեդրոնի տնօրէնու-հին ու տեղակալը, ինչպէս նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Շողակաթ» հեռատեսիլի կայանին պատուիրակուհիներ, որուն նկարահանումները եւ գրոյցները աշխարհով մէկ լոյս փսիտ սփռեց տասնամակներ երկարատեւ այս հեքիաթին վրայ. երազի սկիզբ ՀԲԸՄ-ի գրասեղաններէն, բարձունքն ի վեր խոյացում ու վերջապէս վերադարձ ՀԲԸՄ-ի վարժարաններ՝ ոգեշնչելու նոր սերունդին խոստումնալից զաւակները եւ վառ պահելու անոնց յոյսն ու լոյսը։

ԱԶԳԱՅԻՆ ԲՈՒԺԱՐԱՆԻ «Ա.Տ.Օ.Մ.»-Ի ՏԱՐԵԿԱՆ ՉԵՌՆԱՐԿԸ «COUNTRY LODGE»-Ի ՄԷՉ

Ազունիի Հայ Ազգային բուժարանի Ֆիլմանց օժանդակ մարմինի «Ա.Տ.Օ.Մ.»-ի կազմակերպած տարեկան ծնունդի տեղի ունեցավ Հինգշաբթի, 15 Մայիս 2025-ի կեսօրին առաջ ժամը 11:30-ին, Պալատի «Country Lodge»-ի մեջ, հովանաւորութեամբ բուժարանի խնամակալութեան, նախագահութեամբ տիկ. Ալիս Պողոսեանի եւ ներկայութեամբ քոյր տիկնանց յանձնախումբերու ներկայացուցիչներու եւ շուրջ 120 ներկաներու:



Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներու ունկնդրութենէն ետք, յանձնախումբի ատենապետուհի Թալին Լախեան մայրերու նուիրուած բանաստեղծութեամբ կատարեց ծնունդի բացումը: Ան շնորհակալութիւն յայտնեց օրուայ նախագահին, հիւրերուն եւ բոլոր ներկաներուն իրենց աջակցութեան համար: Ապա հրաւիրեց խնամակալութեան ներկայացուցիչ տիկ. Սօսի Փոլատեանը իր խօսքը փոխանցելու: Ան յիշեցուց խնամակալութեան կատարած իրագործումները վերջին երեք տարուան ընթացքին, ինչպէս մատուռի նորոգութիւն, արեւա-յին վահանակներու գետնէն, պողպատու ծառերու յաւելեալ հոգատարութիւն: Ան դրուատեց նաեւ «Ա.Տ.Օ.Մ.»-ի կողմէ կատարուած ընթացիկ տարուայ աշխատանքները, ինչպէս՝ կրօնական ու ազգային տօներուն առիթներով պատասխանատվութեան համար ստեղծուած հաճելի պահերը, գրադարանի մը ստեղծումը եւ հիւրերու համար վարձու տրուելիք սենեակի մը կահաւորումը: Ան յայտնեց թէ օրուայ ծնունդին հասոյթը պիտի յատկացուի փոքր van-ի մը գնման:



Զեռնարկի նախագահ տիկ. Ալիս Պողոսեան խօսք առնելով արտայայտեց իր խոր գգացումները, նախ իր ներկայութեան համար իբր օրուայ նախագահ: Ապա անդրադարձաւ իր մէջ յուշերուն, որքան ջանքեր են առնուած, որ երկար տարիներ եղած է բուժարանի խնամակալութեան ատենապետ: Տիկ. Պողոսեան շեշտեց թէ իր կապը բուժարանի պատասխարեալներուն հետ շատ խոր է:

Խնամակալութեան ներկայացուցիչները յուշանուէրով եւ ծաղկեփունջով պատուեցին օրուայ նախագահուհին:

Այնուհետեւ տեղի ունեցաւ տեսերիզի ցուցադրութիւն, որ ընդգրկեց խնամակալութեան եւ «Ա.Տ.Օ.Մ.»-ի իրագործած ծրագրերը, նկարներով եւ բացատրութիւններով: Ամփոփելով ետք, ասնունքով ելոյթ ունեցաւ Թալին Լախեան «Մօր ծնեքերը» բանաստեղծութեամբ:

Որմէ ետք, խնամակալութեան անունով, երիցուհի Մարիա Պազալեան անդրադարձաւ թէ ինչպիսի դժուարին պայմաններու մէջ Ազգային բուժարանը կանգուն կը պահուի, համատեղ ջանքերով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Հայ Աւետարանական Եկեղեցւոյ համախմբումին եւ խնամակալութեան: Ան դրուատեց Տիկնանց օժանդակ մարմինին ցարդ կատարած իրագործումները: Տեղեկացուց նաեւ նորակազմ երիտասարդական յանձնախումբին իրականացուցած առաջին ծրագիրը՝ «projector»-ի մը գնումը, որ հաճելի պահեր պիտի պարգեւէ պատասխարեալներուն:

Տիկ. Պազալեան օրուան պատշաճ աղօթքով փակեց իր խօսքը:

Ապա ներկաները հրաւիրուեցան ճաշակելու համադամ ճաշերը: Պահը եղաւ իսկական հայկական մշակոյթի վայելքի պահ մը, յանձին երիտասարդներ բաղկացած «Հեքիաթ» խումբին, որոնք մեկնաբանեցին սիրուած ժողովրդային եւ ազգագրական երգեր իրենց անգլագական ձայնով ու նուագակցութեամբ:

Այնուհետեւ կատարուեցաւ վիճակագրութիւն, Յունուար-Փետրուար 2025-ին ծախուած վիճակահանութեան, ուր բախտաւորուեցան երեք անձեր:

Զեռնարկի վերջին բաժինով տեղի ունեցաւ օրուայ վիճակահանութեան վաճառք: Բախտաւորուեցան ներկաներ արժեքաւոր նուէրներով:

Զեռնարկին հաղորդակցութիւնը կատարեց «Ա.Տ.Օ.Մ.»-ի յանձնախումբի անդամ՝ Լեան Երեմեան:

Ներկաները, խանդավառուած ուրախ եւ հաճելի մթնոլորտէն, կատարեցին արտաբախտ նուիրատուութիւններ:

Ներկաները հիպանդուէրով արտայայտուեցան սրահի եւ սեղաններու ներդաշնակ յարդարանքներուն նկատմամբ: Անոնք մեկնեցան, տոգորուած զուտ հայկական մշակոյթով ու գոհունակութեամբ, վստահ ըլլալով թէ իրենց լուսնի ի սպաս բերին, սատար հանդիսանալով լիբանանահայ կեանքի կարելիոր մէկ կառոյցին՝ Ազունիի Հայ Ազգային բուժարանին:



ՀԱՅՐԵՆԻ ՊԱՐՈՒՄՈՅՑ ԱՍԱՏՈՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԿԸ ՍՏԱՆՁՆԷ Ն.Ս.Մ.Մ. «ԱՐԵՓ» ՊԱՐԱՆՈՒՄԻՆ ԴԵԿԸ

Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնը մեծ ուրախութեամբ կը ծանուցէ, թէ հայրենիքէն Պէյրութ ժամանած է վաստակաշատ պարուսոյց Հայաստանի Պարի Պետական Անսամպլի նախկին գլխաւոր պարուսոյց պարոն Ասատուր Կարապետեանը: Վաստակաշատ պարուսոյցը շուտով պիտի սկսի իր աշխատանքը Ն.Ս.Մ.Մ. պարախումբին հետ՝ ներշնչելով եւ առաջնորդելով երիտաւարդ սերունդը հայ պարարուեստին մէջ:

Նոր Սերունդ Մշակութային Միութեան պարախումբի շրջանակին մէջ պարոն Կարապետեանի ներկայութիւնը յատուկ մշակութիւն ունի: Ան պիտի ստեղծէ նոր աշխուժութիւն եւ խորացում՝ թէ՛ արուեստագիտական, թէ՛ դաստիարակչական իմաստով:

Խումբի անդամներուն համար անկասկած բախտաւորութիւն մըն է աշխատիլ նման վարպետի առաջնորդութեամբ:

Ծնողներն ու հայկական պարարուեստով հետաքրքուողները յաւելեալ մանրամասնութեանց համար կրնան կապ հաստատել 70/265 829 հեռաձայնի թիւով, կամ հետեւիլ Ն.Ս.Մ.Մ.-ի Ֆէյսպուքի պաշտօնական էջին ու «Արարատ» օրաթերթին:

Ն.Ս.Մ.Մ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

«ՆԵՂՈՍԷՆ ՄԻՆՉԵԻ ՕՆԹԱՐԻՕ ԼԻՃ»...

Շարունակուած էջ 3-էն

«1990-ականներուն կարծ ժամանակ մը եղած եմ Սէն Լորէն շրջանի Ազատական կուսակցութեան դաշնակցային երեսփոխան հանգուցեալ տիկ. Շըրլի Մահիլի գործադիր խորհուրդի անդամներէն մէկը (ոչ ընտրովի պաշտօն): Ան շատ լաւ բարեկամ էր Մոնրէալի հայ համայնքին»:

Բոլատեանի ողջ կեանքին նուիրածութիւնը ճշմարտութեան, արդարատութեան եւ սփիւռքահայ ինքնութեան պաշտպանութեան համոզիչ վկայութիւնն է զանազան հասարակութեան բազմաշխուկային բնոյթին: Անոր կեանքը Մոնրէալի մէջ կը ծառայէ օրպէս օրինակ քաղաքացիական ներգրաւածութեան, որ կը հիմնուի յիշողութեան, պատասխանատուութեան եւ պատմական ճանաչումի անխնայ ծոյտումին վրայ: Անոր զգօն հետեւողականութիւնը կը հաստատէ յուշագրութեան հիմնական պատգամը. **գործուն քաղաքակա-նութեան ջատագովութիւնը պաշտօն չէ, այլ կեանքի ձեւ, որոնով մարդ կ'ապրի:**

«Թէեւ ես 1994-ին, հրաժարեցայ դաշնակցութենէն, սակայն տակաւին մօտէն կը հետեւիմ կուսակցութեան եւ հայ դատի յանձնախումբերու գործունեութեան ամբողջ աշխարհի մէջ, եւ թէեւ ներկայիս հազուադէպօրէն, բայց ի պահանջել հարկին եւ այնքան ատեն որ դեռ ֆիզիքապէս ի վիճակի եմ, կը շարունակեմ լայն հանրութեան եւ ընկերային ցանցերու ճամբով ներկայացնել կարծիքս հայկական հարցերու առնչութեամբ»:


ԳՈՐԾԻ ԱՌԻԹ

Հայ աւետարանական զուէր (Հայկազեան համալսարանին կից) աշխատանքի կը հրաւիրէ աշակերտ հաւաքագրողներ (recruiters), որոնք

- Ունին համոզիչ լեզու
- Դիւրահաղորդ եւ ընկերային են
- Կը տիրապետեն կազմակերպչական հմտութիւններու

Հետաքրքրուողներ կրնան իրենց CV-ն ղրկել principal@aecbeirut.edu.lb հասցէին: Նպատակայարմար նկատուած թեկնածուներուն ժամադրութիւն պիտի տրուի տնօրէնութեան հետ տեսակցութեան համար:

ԵՂԱՆԱԿԸ ԱՅՍՕՐ



Պէյրութ (արեւոտ)
Ցերեկը 25/21՝ գիշերը՝ 65% տամուկ

Երեւան (Մասամբ ամպամած)
Ցերեկը 24/14՝ գիշերը՝ 35% տամուկ

Հալէպ (արեւոտ)
Ցերեկը 31/20՝ գիշերը՝ 34% տամուկ

Դամասկոս (արեւոտ)
Ցերեկը 28/15՝ գիշերը՝ 30% տամուկ

Տուապ (արեւոտ)
Ցերեկը 38/29՝ գիշերը՝ 45% տամուկ

Լոս Անճելըս (Ընդի. ամպոտ)
Ցերեկը 23/16՝ գիշերը՝ 61% տամուկ

Սիտնի – վաղը (Մասամբ ամպամած)
Ցերեկը 14/8՝ գիշերը՝ 64% տամուկ

Սոնթվիլտո – վաղը (ամպոտ)
Ցերեկը 16/10՝ գիշերը՝ 79% տամուկ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՅՍՕՐ

3 Յունիս 2025: Տարուան 154-րդ օրն է:
2025-ի աւարտին կը մնայ 211 օր:

Դէպքեր-տօներ

1539 - Ֆլորիտան կը յայտարարուի իբրեւ սպանական տիրոյթ: Սպանացի Զերմանո Տը Սոտոյի արշաւանքէն ետք, Սպանիան իր դիրքերը կ'ամրապնդէ Հիսպանիին Ամերիկայի հարաւ-արեւելքը եւ Ֆլորիտան կ'ընդգրկէ իր գաղութներու ցուցակին վրայ:

1892 - ճոն Զոլտինկ կը հիմնէ «Լիվըրփուլ» ֆութպոլային ակումբը: Քրիքթի Anfield մարզադաշտին շուրջ ծագած վեճերու պատճառով, ճոն Զոլտինկ կը բաժնուի «Լիվըրթըն» ակումբէն ու կը ստեղծէ նոր՝ «Լիվըրփուլ» անունով ակումբը:

Աւստրալիա – Մապոյի Օր (Mabo Day), այս օրը կը նշուի ի պատիւ Էտտի Մապոյի՝ ապորճին ազգաբնակչութեան իրաւունքներու պաշտպան, որուն իրաւական պայքարը գլխաւոր դեր խաղցաւ տեղաբնիկներու հողային իրաւունքը ճանջնալու հարցին մէջ:

Ուկանտա – Նահատակներու օր, տօնը կը նշէ այն ուկանտացի քրիստոնէաներուն յիշատակը, որոնք 1885–1887 թուականներուն գլխատուեցան կամ ողջակիզուեցան՝ իրենց հաւատքին հանդէպ անդդուելի մնալու համար:

Ծնունդներ

1837 – Պերճ Պռոշեան, հայ վիպասան եւ ուսուցիչ: Գրեց գեղեկական կեանքին նուիրուած գործեր:

1911 – Ալեքսանտր Արաքսմանեան, հայ արծակագիր, թատերագիր ու թարգմանիչ:

1933 – Յովհաննէ Յովհաննիսեան, սովետահայ բժիշկ եւ ակադեմիկոս:

1936 – Զեմրիկ Յովհաննիսեան, հայ արուեստաբան եւ մշակութային գործիչ:

1925 – Թոմի Քըրքըս, ամերիկացի նշանաւոր դերասան: Ծնած է Նիւ Եորքի մէջ՝ Պերմարտ Շուարց անունով:

1986 – Ռաֆայէ Նատալ, սպանացի աշխարհահռչակ թենիսիստ:

1929 - Կարլէն Լեւոնի Դալլաքեան (1929–2008), գրականագետ, թարգմանիչ եւ պետական գործիչ:

1955 - Տաթևիկ Նորայրի Յովհաննիսեան, Հոջակաւոր հայ ճագային երգչուհի:

Մահեր

2021 - Թորոս Խաչերի Թորանեան, հայկապահայ գրող, արծակագիր, հրապարակախօս եւ բժիշկ:

1919 – Սմբատ Գաբրիէլեան, բանասէր, բժիշկ եւ հասարակական գործիչ:

1989 – Այաթոլլա Ռուհոլլա Խոմէյնի, Իրանի հոգեւոր առաջնորդ եւ իսլամական յեղափոխութեան ղեկավարը:


1994 – Արէլ Սիմոնեան, հայ պատմաբան, պատմական գիտութիւններու դոկտոր:

1891 – Պետրոս Աղամեան, դերասան, բանաստեղծ ու նկարիչ:

2001 – Ժաք Գեորգեան, ամերիկահայ բժիշկ, գրող եւ քննադատ: Օգնած էր մահացու հիւանդներու կամաւոր մահացման:

1962 - Մարուն Ապպուտ, լիբանանցի նշանաւոր գրագէտ, բանաստեղծ, լրագրող եւ գրականագէտ:

2016 – Մոհամմատ Ալի, ծնունդով Քասիուս Քլէյ կրտսեր: Ան կը նկատուի աշխարհի մեծագոյն բռնցքամարտիկներէն:



ՇՆՈՐՀԱԴՈՐՈՒԹԻՒՆ



Տիրումի Ուսանողական Երիտասարդական Միութեան երկու անդամուհիներ՝ **Ծովակ Զեօշկերեան** եւ **Սելա Աւագեան** յաջողութեամբ եւ Պատուոյ յիշատակութեամբ վկայուած են Պէյրութի Հայկազեան Համալսարանի «Social & Behavioral Sciences» բաժինին:

Այս ուրախ առիթով, **Տ.Ու.Ե. Միութեան վարչութիւնը** ջերմօրէն կը շնորհաւորէ վկայեալ ընկերուհիները, անոնց ծնողքն ու հարազատները:

ARARAD DAILY NEWSPAPER

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradart@gmail.com

ارارات جريدة سبائية يومية أرمنية
تصدر عن شركة ماسيس للصحافة والنشر (ش.م.م.)